ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ *Կ-054-11.03.2019-ՊԻ-011/0* ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	**Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան**	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հոդված 3, մաս 3	Նշված մասով սահմանվող 2018 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու ժամկետի վերաբերյալ կարգավորումները սահմանել «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 59-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու միջոցով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. **Հոդված 2.** Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Հայտարարատու պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք 2018 թվականի տարեկան հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում մինչև 2019 թվականի մայիսի 31-ը: 3. Պաշտոնավարող հայտարարատու պաշտոնատար անձինք առաջին անգամ շահերի վերաբերյալ տվյալներ են ներկայացնում 2019 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ:»: Նախագծի 3-րդ հոդվածը վերահամարակալվել է որպես 4-րդ հոդված:	Ընդունվել է:
2		Նախագծի հոդված 3	Անհրաժեշտ է նախատեսել դրույթ առ այն, որ 2018 թվականի տարեկան, ինչպես նաև պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագիր ներկայացրած անձինք համարվում են	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածը (վերահամարակալվել է որպես 4-րդ հոդված) լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր մասով «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը	Ընդունվել է:

			հայտարարագիր ներկայացրած:	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով 2018 թվականի տարեկան, ինչպես նաև պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագիր ներկայացրած անձինք ազատվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից և համարվում են հայտարարագիր ներկայացրած:»:	
3		Նախագծի հոդված 3, մաս 5	Առաջարկվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց ցանկում ներառել Բարձրագույն դատական խորհրդի անդամներին:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ մասում (վերահամարակալվել է որպես 4-րդ հոդված, 6-րդ մաս) ցանկը լրացվել է «Բարձրագույն դատական խորհրդի անդամները» բառերով:	Ընդունվել է:
4		Նախագծի հոդված 3, մաս 5	Առաջարկվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց ցանկում «կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը» բառերը փոխարինել «կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ մասում (վերահամարակալվել է որպես 4-րդ հոդված, 6-րդ մաս) «կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը» բառերը փոխարինել «կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները» բառերով:	Ընդունվել է:
5		Նախագծի հոդված 3	Առաջարկվում է նախատեսել հատուկ կարգավորում Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածը (վերահամարակալվել է որպես 4-րդ հոդված) լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր մասով. Բարձրագույն դատական խորհրդի անդամները պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագիր են ներկայացնում օրենքն ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա ժամկետում:	Ընդունվել է: